

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՒՍՈՒՑՉԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔԻ ՍՏՈՒԳՈՒՄ

2024

ՏԵԽՆՈԼՈԳԻԱ

ԹԵՄԱ 4

ԽՄԲԻ ՀԱՄԱՐԸ

ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ

Հարգելի՛ ուսուցիչ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության:
Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի
անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք դրան անդրադառնալ
ավելի ուշ:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարող եք օգտագործել սնագրության համար:

1

Որքա՞ն պետք է լինի ճիշտ սրված գրաֆիկական մատիտի բացված գրաֆիտե միջուկի չափը.

- 1) 8մմ
- 2) 6մմ
- 3) 4մմ
- 4) 5մմ

2

Կամայական կոր գծերի վերջնագծման համար նախատեսված է.

- 1) կորաքանոնը
- 2) կարկինը
- 3) ձողակարկին
- 4) փոխադրիչը

3

Որքան է A0 ձևաչափի թղթի կողերի երկարությունը.

- 1) 594x841մմ
- 2) 1279x561մմ
- 3) 1279x951մմ
- 4) 1189x841մմ

4

Եթե գծագրի վրա կան միմյանց զուգահեռ մի քանի չափագծեր ապա եզրագծին մոտ գրառում են՝

- 1) տասնորդական թիվը
- 2) փոքր չափը
- 3) գույգ թիվը
- 4) մեծ չափը

5

Ո՞ր գծով են պատկերում գծագրի համաչափության առանցքները և կենտրոնագծերը.

- 1) ալիքաձև գիծ
- 2) բարակ հոծ գիծ
- 3) գծակետային գիծ
- 4) գծիկային գիծ

6

Ֆրոնտալային V հարթությանը ուղղահայաց AB հատվածի ուղղանկյուն պրոյեկցիան հորիզոնական հարթության վրա կլինի՝

- 1) AB հատվածի իրական չափից մեծ հատված
- 2) AB հատվածի 1/2 չափով հատված
- 3) AB հատվածի իրական չափից փոքր հատված
- 4) AB հատվածի իրական մեծության չափով հատված

7

Ո՞ր տեսքն է ընդունվում որպես գծագրի գլխավոր տեսք.

- 1) տեսք վերնից
- 2) տեսք դիմացից
- 3) տեսք ներքևից
- 4) տեսք ձախից

8

Ուղիղ գծերի կառուցման ժամանակ մատիտը պետք է՝

- 1) թղթի նկատմամբ կազմի 45° անկյուն
- 2) փոքր ինչ թեքել շարժման հակառակ կողմը
- 3) փոքր ինչ թեքել շարժման կողմը
- 4) լինի թղթին ուղղահայաց

9

Գծերի անցկացման ո՞ր հաջորդականությունն է ճիշտ.

- 1) 1. առանցքային և կենտրոնական, 2. շրջանագծեր և աղեղներ, 3. կորագծեր, 4. հորիզոնական ուղիղներ, 5. ուղղաձիգ ուղիղներ, 6. թեք ուղիղներ
- 2) 1. առանցքային և կենտրոնական, 2. թեք ուղիղներ, 3. կորագծեր, 4. հորիզոնական ուղիղներ, 5. ուղղաձիգ ուղիղներ, 6. շրջանագծեր և աղեղներ
- 3) 1. առանցքային և կենտրոնական, 2. կորագծեր, 3. շրջանագծեր և աղեղներ, 4. հորիզոնական ուղիղներ, 5. ուղղաձիգ ուղիղներ, 6. թեք ուղիղներ
- 4) 1. առանցքային և կենտրոնական, 2. հորիզոնական ուղիղներ, 3. շրջանագծեր և աղեղներ, 4. կորագծեր, 5. ուղղաձիգ ուղիղներ, 6. թեք ուղիղներ

10

Քանի՞ տոկոս խոնավության դեպքում են չափում փայտի խտությունը.

- 1) 18%
- 2) 14%
- 3) 12%
- 4) 15%

11

Ծառի բնի որ շերտով են տեղաշարժվում օգտակար սննդանյութերը.

- 1) նրբակեղևային շերտ
- 2) խցանային շերտ
- 3) կամբիումի բարակ շերտ
- 4) ենթակեղևային շերտ

12

Փայտանյութի կոնտակտային չորացման դեպքում մետաղական սալերը ի՞նչ ջերմաստիճանի են լինում.

- 1) մինչև 170°C
- 2) մինչև 200°C
- 3) մինչև 150°C
- 4) մինչև 180°C

13

Ի՞նչ է նշվում տեխնոլոգիական քարտում.

- 1) փայտանյութի տեսակը, գործիքները և հարմարանքները
- 2) գործողությունների կատարման հաջորդականությունը, չափանշման եղանակները, գրաֆիկական պատկերները
- 3) գրաֆիկական պատկերումը, գործողությունների կատարման հաջորդականությունը, գործիքները և հարմարանքները
- 4) գործողությունների կատարման հաջորդակալությունը, արտադրանքի տեսակը

14

Ինչպիսի՞ խարտոցների միջոցով է կատարվում սղոցների աստամների սրումը.

- 1) եռանիստ կամ շեղանկյուն
- 2) եռանիստ կամ կիսակլոր
- 3) եռանիստ կամ կլոր
- 4) եռանիստ կամ քառանիստ

15

Թործում կատարելիս ի՞նչ դիրք պետք է ունենա դուրը մշակվող մաներևույթի նկատմամբ.

- 1) մշակվող մակերևույթին նկատմամբ 45° անկյան տակ թեքված, ուղղված դեպի աշխատողը
- 2) մշակվող մակերևույթին նկատմամբ 45° անկյան տակ թեքված, ողղված աշխատողին հակառակ կողմ
- 3) մշակվող մակերևույթին նկատմամբ 45° անկյան տակ թեքված, սրված մասով ուղղված դեպի բնիկը
- 4) մշակվող մակերևույթին ուղղահայաց, սրված մասով ուղղված դեպի բնիկը

16

Սղոցանյութերի ծովածության ի՞նչ ձևեր գիտեք.

- 1) լայնական, պտուտակային, խաչաձև
- 2) երկայնական պարուրակային, փետրաձև
- 3) երկայնական, լայնական, պտուտակային
- 4) երկայնական, լայնական, փետրաձև

17

Ո՞րն է փայտանյութի կտրման համար նախատեսված կտրիչի սրման անկյունը.

- 1) առջևի մակերևույթով և կտրման հարթությանն ողղահայաց հարթությունով կազմված անկյունը
- 2) հետևի մակերևույթով և կտրման հարթությամբ կազմված անկյուն
- 3) առջևի մակերևույթով և կտրման հարթությամբ կազմված անկյուն
- 4) առջևի և հետևի մակերևույթներով կազմված անկյունը

18

Մեխերի առանցքների հեռավորությունը մանրաթելերին ուղղահայաց ուղղությամբ պետք է լինի ոչ պակաս քան`

- 1) 15d
- 2) 10d
- 3) 4d
- 4) 5d

19

Ի՞նչ ձև ունի փայտի մեջ շաղափված խուլ անցքի հատակը.

- 1) կոնաձև
- 2) ուռուցիկ
- 3) խորդուբորդ
- 4) հարթ

20

Ինչի՞ համար են օգտագործում տոլրիկը(տոլրիչը).

- 1) շինվածքների մաքրատաշ մշակման համար
- 2) մակերևույթների վերջնական մաքրման և հղկման համար
- 3) նախնական, կոպիտ հղկման համար
- 4) դժվար հասանելի տեղամասերի մշակման համար

21

Առողջ մարդու սննդի օրաբաժնում սպիտակուցների, ճարպերի և ածխաջրերի հարաբերակցությունը պետք է լինի մոտավորապես`

- 1) 1:2:4
- 2) 1:1:3
- 3) 1:2:3
- 4) 1:1:4

22

Ո՞ր շարքում են նշված միայն արմատապտղավորները

- 1) գոնգեղ, ստեպղին, ճակնդեղ, շաղգամ, արմատային մաղադանոս
- 2) արմատային մաղադանոս, արմատային նեխուր, թրթնջուկ, անխոն
- 3) գոնգեղ, ճակնդեղ, խավրժիլ, բամբակ, շաղգամ, բողկ
- 4) արմատային մաղադանոս, արմատային նեխուր, բակլան, խավրժինը

23

Ո՞ր շարքի բոլոր վիտամիններն են ճարպալուծ

- 1) ADPB
- 2) ADKE
- 3) ADPE
- 4) ADCB

24

Ի՞նչ անել, որպեսզի աճեռոցիկները կանգուն լինեն ծալադրման ընթացքում և հաճելի՝ օգտագործելիս.

- 1) օսլայել
- 2) հենել սպասքին
- 3) ծալել մանր ծալքերով
- 4) արդուկել

25

Ո՞ր ջերմաստիճանից են ոչնչանում բուտուլիզմի հարուցիչները

- 1) 100°C -ից բարձր
- 2) 110°C -ից բարձր
- 3) 120°C -ից բարձր
- 4) 90°C-ից բարձր

26

Բարակ թերթամետաղից դետալների գրաֆիկական պատկերման ժամանակ ի՞նչ գծով են ցույց տրվում ծոման տեղերը.

- 1) գծաերկկետային գծով
- 2) ալիքաձև գծով
- 3) բարակ գծով
- 4) գծակետային գծով

27

Բարակ թերթամետաղի ուղղման ժամանակ մուրճի հարվածները n ր հատվածում են առավել ուժգին լինում.

- 1) եզրային հատվածում
- 2) ուռուցիկ մասից հեռու հատվածում
- 3) ուռուցիկ մասին մոտ հատվածում
- 4) կենտրոնական հատվածում

28

Ω ր պատկերն է կոչվում ֆրոնտալային պրոյեկցիա.

- 1) որը ստացվում է ZOY հարթության վրա պրոյեկտելիս
- 2) որը ստացվում է XOY հարթության վրա պրոյեկտելիս
- 3) որը ստացվում է XYZ հարթության վրա պրոյեկտելիս
- 4) որը ստացվում է ZOX հարթության վրա պրոյեկտելիս

29

Բարակ թերթամետաղը ժամալաքի ուղղությամբ կորագծով կտրելիս օգտագործում են՝

- 1) լծակավոր մկրատ
- 2) աջ մկրատ
- 3) փականագործական սղոց
- 4) ձախ մկրատ

30

Նշվածներից n րը մետաղի մեխանիկական հատկությունն չէ.

- 1) կարծրություն
- 2) ամրություն
- 3) կռելիություն
- 4) պլաստիկություն

31

Նշվածներից n րը փականագործական սղոցի մասն չէ

- 1) բույթ
- 2) երկկանթանի մանեկ
- 3) հեղյուս
- 4) շրջանակ




32

Ի՞նչ մետաղի համաձուլվածք է բռնզը.

- 1) անագի և ցինկի
- 2) կապարի և անագի
- 3) պղնձի և արույրի
- 4) պղնձի և կապարի

33

Մետաղամշակման մեջ ձուլման կոման և այլ ոչ տաշեղահանման եղանակով մշակված մակերևույթները նշվում են՝

- 1) 
- 2) 
- 3) Rz
- 4) 

34

Ինչպե՞ս են ստուգում հատիչի սրման անկյունը.

- 1) անկյունաչափով
- 2) աչքաչափով
- 3) ձևանմուշով
- 4) փոխադրիչով

35

Ի՞նչ հիմունքով են խարտոցները բաժանվում վեց համարների.

- 1) ըստ խարտոցի աշխատամասի 10մմ երկարության վրա եղած ծրատվածքների թվի
- 2) ըստ խարտոցի աշխատամասի 10մմ երկարության վրա եղած ծրատվածքների խոշորության
- 3) ըստ խարտոցի աշխատամասի հաստության
- 4) ըստ խարտոցի երկարության

36

Ի՞նչ եղանակով են ստանում 5մմ-ից փոքր տրամագիծ ունեցող մետաղալարերը.

- 1) ձողի շուրջը ձգելով
- 2) թելքակորզման եղանակով
- 3) ձուլման եղանակով
- 4) լարագլոցման եղանակով

37

Ի՞նչ դուր են օգտագործում փայտի փորագրության ժամանակ փոքր խորության երկնիստ փորվածքներ կատարելու համար.

- 1) հարթ շեղ (շեղակ)
- 2) անկյունային
- 3) ճոռածև
- 4) հարթ ուղիղ

38

Ինչպե՞ս են անվանում փայտի ռելիեֆային փորագրության այն տեսակը, երբ պատկերի ուռուցիկ մասը հետին պլանի մակերևույթից բարձր է իր ծավալի կես չափից ավելի.

- 1) բառելիեֆ
- 2) գոռելիեֆ
- 3) մակրոռելիեֆ
- 4) հարթաքանդակ

39

Փայտի փորագրության ժամանակ ինչ գործողություն են կատարում շեղակով.

- 1) տաշում
- 2) հղկում
- 3) կորագիծ կտրում
- 4) մակակտրում և կտրում

40

Արաբերեն n° ր բառից է ծագել «Մաքրամե» անվանումը.

- 1) միհրամախ
- 2) մանխայամ
- 3) մարես
- 4) մանհապոլդ

41

Նշվածներից ո՞րն է սինթետիկ մանրաթել.

- 1) ացետատ
- 2) լավսան
- 3) ջուտ
- 4) վիսկոզա

42

Ո՞ր թելատու բույսի տերևների վրա է առաջանում բուսական մանրաթել.

- 1) մետաքսածառ
- 2) վուշ
- 3) արմատավուշ
- 4) ջուտ

43

Կանացի հագուստի չափափորձման ժամանակ դերձակը շտկումները հագուստի ո՞ր հատվածում է կատարում.

- 1) ձախ կիսամասի վրա
- 2) կենտրոնական հատվածում
- 3) հագուստի հակառակ կողմում
- 4) աջ կիսամասի վրա

44

Նշվածներից ո՞րը բամբակե գործվածք չէ.

- 1) վուշ
- 2) բատիստ
- 3) մարկիզետ
- 4) սատին

45

Ի՞նչ ուղղությամբ են դասավորված հենքաթելերը գործվածքներում.

- 1) ուղղված են գործվածքի լայնքով
- 2) ուղղված են գործվածքի անկյունագծով
- 3) դասավորված են անկանոն
- 4) ուղղված են գործվածքի երկայնքով

46

Ի՞նչ է թակալակարը.

- 1) ժամանակավոր բնույթ կրող կարի տեսակ է, որի կարակուրի նվազագույն հեռավորությունը 0,2-0,7սմ է
- 2) հիմնական կարի տեսակ է, որի կարակուրի նվազագույն հեռավորությունը 0,5-0,7սմ է
- 3) մեքենայակար է, որի կարակուրի նվազագույն հեռավորությունը 0,2-0,7սմ է
- 4) հիմնական կարի տեսակ է, որի կարակուրի նվազագույն հեռավորությունը 0,2-0,7սմ է

47

Ի՞նչ է ձևանք.

- 1) բնական չափերի գծագիր
- 2) տեխնիկական նկար
- 3) նկար
- 4) էսքիզ

48

Յուրաքանչյուր հաստոց կազմված է ոչ պակաս քան երեք բաղադրամասից՝

- 1) շարժիչից, փոխանցան մեխանիզմից, մատուցման մեխանիզմից
- 2) շարժիչից, փոխանցման մեխանիզմից, աշխատանքային օրգանից
- 3) շարժիչից, ղեկավարման մեխանիզմից, մատուցման օրգանից
- 4) շարժիչից, մատուցման մեխանիզմից, աշխատանքային օրգանից

49

Խառատային հաստոցի վրա ո՞ր շարժումն է համարվում գլխավոր շարժում.

- 1) կտրող գործիքի պտտական շարժում
- 2) նախապատրաստվածքի պտտական շարժում
- 3) լայնական և երկայնական շարժում
- 4) մատուցման շարժում

50

Ի՞նչ տեսք ունի պինդի ներսի անցքը

- 1) կոնական տեսք
- 2) ձևավոր տեսք
- 3) օվալաձև տեսք
- 4) գլանական տեսք

51

Մետաղների մշակման հորիզոնական ֆրեզերային հաստոցի մաս չէ.

- 1) սեղան
- 2) հենոց
- 3) կապիչ
- 4) բարձակ

52

Ի՞նչ է ցույց տալիս կարի մեքենայի ասեղի համարը.

- 1) որքան մեծ է համարը, այնքան ասեղը հաստ է
- 2) որքան մեծ է համարը, այնքան ասեղը բարակ է
- 3) որքան մեծ է համարը, այնքան ասեղը որակով է
- 4) որքան մեծ է համարը, այնքան ասեղը ամուր է

53

Կարի մեքենայի ասեղի ո՞ր հատվածում է գտնվում կարճ ճոռիկը.

- 1) ասեղի հետևից
- 2) ասեղի առջևից
- 3) ասեղի գլխիկին
- 4) ասեղի պոչամասին

54

Ի՞նչ է ցույց տալիս կարի մեքենայի թելի համարը.

- 1) որքան մեծ է համարը, այնքան ամուր է թելը
- 2) որքան մեծ է համարը, այնքան որակով է թելը
- 3) որքան մեծ է համարը, այնքան բարակ է թելը
- 4) որքան մեծ է համարը, այնքան հաստ է թելը

55

Ինչպիսի՞ ֆրեզ են օգտագործում առվակներ ստանալու համար.

- 1) ծայրային
- 2) գլանական
- 3) ձևավոր
- 4) կտորահատ

56

Արհեստական մանրաթելերը ստանում են՝

- 1) լավսանից
- 2) կապրոնից
- 3) ջուտից
- 4) բնական պոլիմերներից

57

Ինչպիսի՞ն կարող է լինել դիմադրությունը կախված հաղորդչի հաստությունից.

- 1) որքան հաստ է հաղորդիչը այնքան մեծ է դիմադրությունը
- 2) որքան հաստ է հաղորդիչը այնքան փոփոխական է դիմադրությունը
- 3) որքան հաստ է հաղորդիչը այնքան հաստատուն է դիմադրությունը
- 4) որքան հաստ է հաղորդիչը այնքան փոքր է դիմադրությունը

58

Ի՞նչ է հոսանքի ուժը.

- 1) դա այն էլեկտրական լիցքն է, որը ժամանակի միավորի ընթացքում անցնում է հաղորդչով
- 2) դա այն ուժն է, որը ազդում է հաղորդչի վրա
- 3) դա այն ուժն է, որը հանդիսանում է էլեկտրական հոսանքի առաջացման պատճառ
- 4) դա այն էլեկտրական լիցքն է, որը ժամանակի միավորի ընթացքում ազդում է հաղորդչի վրա

59 Ո՞ր մեքենան աշխատանքային չէ.

- 1) փոխադրիչ
- 2) տեխնոլոգիական
- 3) կիրեռնետիկական
- 4) կենցաղային

60 Այլ մարմինների ազդեցությամբ մետաղի՝ դեֆորմացիայի դիմանալու ընդունակությունը կոչվում է՝

- 1) կարծրություն
- 2) պլաստիկություն
- 3) տեխնոլոգիականություն
- 4) ամրություն

61 Նախապատրաստվածքը շինվածքի վերածելու համար կատարվող գործողությունների ամբողջությունը կոչվում է՝

- 1) տեխնիկական գործընթաց
- 2) արտադրական գործընթաց
- 3) ավարտական գործընթաց
- 4) տեխնոլոգիական գործընթաց

62 Քանի՞ մասի է բաժանված 0,1մմ ճշգրտությամբ ձողակարկինի նոնիուսի սանդղակը.

- 1) 10
- 2) 11
- 3) 9
- 4) 8

63 0,1մմ ճշգրտությամբ ձողակարկինի նոնիուսի սանդղակի յուրաքանչյուր բաժանումը հավասար է.

- 1) 1,9մմ
- 2) 1մմ
- 3) 1,5մմ
- 4) 0,25մմ

64 Նշվածներից ո՞րը խարտոցման տեսակ չէ.

- 1) երկայնական
- 2) ուղղաձիգ
- 3) շրջանաձև
- 4) լայնական

65 Կաթնամթերքի ո՞ր տեսակին են անվանում լոռ.

- 1) թթվասեր
- 2) կաթնաշոռ
- 3) սերուցք
- 4) պանիր

66 Մետաղի այն հատկությունը, որը թույլ է տալիս նոր ձևի ստացում հարվածների օգնությամբ կոչվում է՝

- 1) կռելիություն
- 2) ծռում
- 3) գոդում
- 4) եռակցելիություն

67 Որքա՞ն պետք է կազմի հատիչի թեքման անկյունը մամլակի շուրթերի եզրերի նկատմամբ.

- 1) $45...60^\circ$
- 2) $65...70^\circ$
- 3) $20...25^\circ$
- 4) $30...40^\circ$

68 Մետաղամշակման ինչպիսի՞ գործընթաց է արջնումը.

- 1) հատում
- 2) ձուլում
- 3) վերջնամշակում
- 4) հղկում

69

Ո՞ր գործվածքների հենքաթելերն ու միջնաթելերը ունեն միևնույն հաստությունը ու խտությունը.

- 1) ատլասային
- 2) քաթանային
- 3) սատինային
- 4) սարժային

70

Ո՞ր փոխանցման մեխանիզմի դեպքում է պտտման առանցքները միմյանց ուղղահայաց.

- 1) շղթայավոր փոխանցում
- 2) գլանական ատամնավոր փոխանցում
- 3) կոնական ատամնավոր փոխանցում
- 4) ատամնաքանոնավոր փոխանցում

71

Ո՞ր դազգահներն են օգտագործում միայն փայտի մշակման համար.

- 1) փականագործական
- 2) կոմբինացված
- 3) շինարարական
- 4) ատաղձագործական

72

Գամման ժամանակ որքա՞ն պետք է անցքի տրամագիծը մեծ լինի գամի տրամագծից.

- 1) 0,1-0,3մմ-ով
- 2) 1-2մմ-ով
- 3) 1-1,5մմ-ով
- 4) 0,6-0,9մմ-ով

73

Հագուստի խնամքի ո՞ր պայմանական նշանն է պատկերված.



- 1) կարելի է օգտագործել ցանկացած լուծիչ, բացի եռքլորէթիլենից
- 2) քիմաքրումն արգելված է
- 3) կարելի է ենթարկել քիմաքրման
- 4) կարելի է օգտագործել ցանկացած լուծիչ

74 Նշվածներից ո՞րը շաղափի տեսակ չէ.

- 1) փետրաձև
- 2) պտուտակաձև
- 3) դանակաձև
- 4) գդալաձև

75 Ո՞ր կողմում պետք է լինի մեխի գլխիկը տարբեր հաստությամբ դետալներ միացնելու դեպքում.

- 1) հաստ դետալի կողմում
- 2) միացման կենտրոնում
- 3) երկու կողմում էլ
- 4) բարակ դետալի կողմում

76 Նշվածներից ո՞րը երկրաչափական փորագրության տար չէ.

- 1) ճառագայթ
- 2) աչիկ
- 3) շրջանագիծ
- 4) լապտեր

77 Նշվածներից ո՞րը պալարապտղավոր բանջարիդեն չէ.

- 1) բաթաթ
- 2) գետնատանձ
- 3) գազար
- 4) կարտոֆիլ

78 Ո՞ր փոխանցման մեխանիզմի պայմանանշանն է պատկերված



- 1) ատամնաքանոնավոր փոխանցում
- 2) շղթայավոր փոխանցում
- 3) գլանական ատամնավոր փոխանցում
- 4) փոկավոր փոխանցում

79

Որքա՞ն կփոքրանա նախապատրաստվածքի տրամագիծը
խառատապտուտակահան հաստոցի լայնական մատուցման բռնակլին լիմբի
միջոցով մեկ բաժանում մատուցման դեպքում.

- 1) 0,25մմ
- 2) 0,05մմ
- 3) 0,5մմ
- 4) 0,025մմ

80

Ոսկե հատույթի n ր բանաձևն է ճիշտ.

- 1) $(u+p):p=u:p$
- 2) $(u+p):u=p:w$
- 3) $(u+p):p=p:w$
- 4) $(u+p):u=w:p$